

Կայացավ „Տարվա լավագույն տնօրեն, լավագույն ուսուցիչ, լավագույն դաստիարակ,, մրցույթի մարզային փուլը

18.05.2015թ.

ՀՀ Կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված „Տարվա լավագույն տնօրեն,, , „Տարվա լավագույն ուսուցիչ,, , „Տարվա լավագույն դաստիարակ,, անվանակարգերում անցկացվող մրցույթի մարզային փուլը Գեղարքունիքի մարզպետարանում տեղի ունեցավ մայիսի 15-ին: Այս տարի մարզային փուլին մասնակցելու հայտ էին ներկայացրել դպրոցական խորհուրդների կողմից երաշխավորված 15 ներկայացուցիչներ, որոնցից 13-ը՝ „Տարվա լավագույն ուսուցիչ,, անվանակարգում: Իսկ „Տարվա լավագույն տնօրեն,, և „Տարվա լավագույն դաստիարակ,, անվանակարգերում ներկայացվել էր 1-ական հայտ: Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանի կարգադրությամբ ստեղծված մրցութային հանձնաժողովի գնահատմամբ հանրապետական փուլին „Տարվա լավագույն տնօրեն անվանակարգում Գեղարքունիքի մարզը կներկայացնի Կարմիրգյուղի N2 միջնակարգ դպրոցի տնօրեն Գոհար Ենգոյանը, „Տարվա լավագույն ուսուցիչ,, անվանակարգում՝ Ճամբարակ քաղաքի N4 միջնակարգ դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի Արմենուհի Առաքելյանը, իսկ „Տարվա լավագույն դաստիարակ,, անվանակարգում՝ Սարուխան գյուղի N1 մանկապարտեզի երաժշտական դաստիարակ Նարա Պողոսյանը: